

Luys Lnyu®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
4. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ 2022-2026ԹԹ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ	10
5. ԱՄՓՈՓՈՒՄ	13

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջի՝ կառավարությունը յուրաքանչյուր տարի կազմում և հաստատում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որը հաստատվելուց հետո ուղարկվում է Ազգային ժողով և հրապարակվում: ՄԺԾԾ-ն առաջիկա տարիներին կառավարության հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ է: Իսկ ՄԺԾԾ-ի առաջին տարվան առնչվող մասը բնութագրվում է որպես առաջիկա տարվա պետական բյուջեի նախնական նախագիծ:

2022 թվականին կառավարությունը, բացի հիմնական 2023-2025թթ. ՄԺԾԾ փաստաթուղթը¹ մշակելուց և հաստատելուց, նաև վերանայել և հաստատել է կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների՝ 2021 թվականին կազմած և հաստատված ծրագիրը² (առաջնորդվելով հարկաբյուջետային կանոնների պահանջով՝ 2020թ. տարեվերջի դրությամբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 60% սահմանային շեմը գերազանցելու հաջորդ տարում կառավարությունը ներկայացրել է պարտքի բեռի նվազեցման ծրագիրը):

Համաձայն ՄԺԾԾ-ի՝ անցած հինգ ամիսների տնտեսական զարգացումները թույլ են տալիս ակնկալել, որ 2022 թվականին ՀՀ տնտեսությունը կվերականգնվի 2020 թվականի համավարակի և Արցախյան պատերազմի պատճառով արձանագրված տնտեսական անկումից հետո: Այս պարագայում, հաշվի առնելով, որ կառավարության ՄԺԾԾ-ում արտացոլվում են կառավարության սպասումները հետագա տնտեսական զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև առաջիկա տարիներին վարվելիք քաղաքականության շրջանակներում իրականացվելիք միջոցառումները և դրանցից սպասվող արդյունքները, հատկապես կարևորվում է դրա հանգամանալից ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Սույն վերլուծությունում ուսումնասիրվել են 2023-2025թթ. ՄԺԾԾ-ի և «Կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. վերանայված

¹ Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV73-6817-ACFF-CBF2/1010.1.pdf (այցելվել է 13.07.2022թ.):

² Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների վերանայված ծրագիր, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV73-6817-ACFF-CBF2/1010.2.pdf (այցելվել է 13.07.2022թ.):

ծրագրի» հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական կանխատեսումները և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՄԺԾԾ-ի հիմքում դրված մակրոտնտեսական շրջանակի համաձայն՝ 2022թ. և միջնաժամկետում կառավարությունը թիրախավորում է առնվազն 7% տնտեսական աճ: Նկատի ունենալով, որ անցած մի քանի ամիսներին տնտեսական աճի բարձր տեմպերի արձանագրման հարցում զգալի է եղել արտաքին գործոնների դրական ազդեցությունը, այդ գործոնների վերացման կամ թուլացման դեպքում թիրախավորված աճի տեմպը կարող է դառնալ խիստ անիրատեսական: Թերևս նաև դրանով կարելի է բացատրել միջազգային ֆինանսական կառույցների զգուշավորությունը ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների հարցում:

Մասնավորապես, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները 2022թ. համար խիստ պահպանողական էին: Այսպես, ռուս-ուկրաինական զինված հակամարտությունով պայմանավորված՝ World Economic Outlook զեկույցի վերանայումից հետո, ՀՀ համար կանխատեսվում էր ընդամենը 1.5% տնտեսական աճ, իսկ 2023-2025 թվականներին՝ 4-4.5%:


Լավատեսական չի կարելի համարել նաև Համաշխարհային բանկի (ՀԲ) կանխատեսման հունիսյան վերանայումը, որով Հայաստանի՝ 2022 թվականի համար, Ուկրաինայում ռազմական գործողությունների հավանական ազդեցությունը հաշվի առնելով, ապրիլ ամսին կանխատեսված 1.2% տնտեսական աճի տեմպը բարձրացվեց մինչև 3.5%-ի, սակայն այն, միևնույն է, կրկնակի ցածր է մնում կառավարության նախանշած թիրախային 7% շեմից:

Համաձայն ՄԺԾԾ-ի՝ 2022 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների, իսկ միջնաժամկետում՝ արդյունաբերության և շինարարության ճյուղերի առաջանցիկ աճերով: Նշվում է, որ տնտեսության կառուցվածքում ծառայությունների մեծ դերով պայմանավորված տնտեսական աճին առավել մեծ նպաստում կունենա ծառայությունների աճը: Ակնկալվում է, որ ամբողջական պահանջարկը ևս կաճի՝ պայմանավորված հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:

Ծրագրով նախատեսվում է, որ կարճաժամկետ հատվածում ԿԲ-ն կշարունակի իրականացնել գնաճային սպասումների արագացման ռիսկերի չեզոքացմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Համաձայն ծրագրի հիմքում ընկած կանխատեսումների՝ 12-ամսյա գնաճը դեռևս կպահպանվի

նպատակային ցուցանիշից բարձր մակարդակում, աստիճանաբար կնվազի և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Անվիճելի է, որ բարձր գնաճի առանցքային պատճառներից է համաշխարհային շուկայում գների մակարդակի էական աճը: Որոշ փորձագետներ և միջազգային ֆինանսական կառույցների զգալի մասը (այդ թվում՝ ԱՄՀ-ն և ՀԲ-ն) գտնում է, որ այդ աճը կշարունակվի (ավելին, դրանց մի մասի կարծիքով՝ ավելի կխորանա) տեսանելի ապագայում: Այս պարագայում, գնաճի 4% նպատակային ցուցանիշի ապահովումը անիրատեսական է թվում: Ի դեպ, ՄԺԾԾ-ում դա հիմնականում որպես արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկ է դիտարկված: Ըստ էության, ստացվում է, որ ՄԺԾԾ սցենարի հիմքում դրված կանխատեսման չիրականանալու (հետևաբար նաև սահմանված թիրախներին հասնելը վտանգված լինելու) դեպքում, ի սկզբանե, հիմնական «պատասխանատվությունը» դրվում է արտաքին գործոնների վրա:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %³



Համաձայն 2023-2025թթ. ՄԺԾԾ-ի՝ ակնկալվում է, որ 2022թ. արտահանումը և ներմուծումը կաճեն համապատասխանաբար 11.8% և 10.4%-ով՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի, ինչպես նաև տնտեսական ակտիվության վերականգմամբ: Նկատի ունենալով, որ 2022 թվականի առաջին հինգ ամիսներին արձանագրված արտահանման և ներմուծման ծավալների փաստացի աճերը զգալիորեն գերազանցում են փաստաթղթում սպասվող աճերը, կարելի է ենթադրել, որ դրանցում հաշվի չի առնվել Ուկրաինայում ռազմական գործողությունների պատճառով ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով պայմանավորված՝ վերաարտահանման նպատակով ներմուծման ազդեցությունը:

Ըստ ՄԺԾԾ-ի՝ ակնկալվում է, որ միջնաժամկետում արտահանումն ու ներմուծումը կաճեն միջին հաշվով 12.6%-ով և 10.8%-ով:

³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ, ՀԲ և ԱՄՀ հրապարակումներ:

Աղյուսակ 1. 2023-2025թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները⁴

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2019	2020	2021	2022	2023	2024	2025
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,543.3	6,181.9	6,983.0	8,069.5	9,066.1	10,108.2	11,248.4
Տնտեսական աճ, %	7.6	-7.2	5.7	7.0	7.0	7.0	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.0	1.8	6.9	8.0	5.0	4.2	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	0.7	3.7	7.7	8.2	5.4	4.0	4.0
Գնաճ (միջին), %	1.4	1.2	7.2	8.0	5.0	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	11.9	-1.4	3.5	2.0	8.5	8.2	8.2
Գյուղատնտեսություն	-5.8	-3.7	-0.6	0.0	3.2	3.8	4.0
Շինարարություն	6.5	-5.9	3.1	10.0	12.5	12.8	12.9
Ծառայություններ	10.0	-9.6	7.9	10.3	6.5	6.4	6.3
Զուտ հարկեր	7.1	-9.9	7.4	6.5	7.2	7.1	7.1
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	11.7	-10.9	4.2	8.1	4.2	5.3	5.6
Պետական	12.9	9.2	8.4	-0.2	1.3	8.5	6.4
Մասնավոր	11.5	-14.0	3.4	9.9	4.8	4.7	5.5
Հիմնական միջոցներում ներդրումներ ⁵	4.4	-1.5	6.3	16.0	22.2	10.3	11.4
Պետական	13.7	6.1	18.4	22.2	51.7	11.1	14.9
Մասնավոր	2.6	-3.1	3.5	14.3	13.8	10.0	10.0
Արտահանում	16.0	-33.5	16.5	11.8	12.2	14.8	10.8
Ներմուծում	11.6	-31.5	11.5	10.4	11.6	11.0	9.8
Արտաքին հատված, % ՀՆԱ-ում							
Ընթացիկ հաշիվ	-7.4	-3.8	-3.7	-4.5	-6.4	-5.9	-5.9
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-13.2	-9.9	-8.3	-8.2	-8.7	-7.8	-7.7
Արտահանում	42.0	29.8	35.2	35.5	36.9	39.6	41.0
Ներմուծում	55.2	39.7	43.5	43.7	45.6	47.4	48.7

⁴ Աղբյուրը՝ 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիր:

⁵ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ ասած՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

Դրամական փոխանցումներ	8.4	8.2	9.3	7.0	6.0	5.6	5.4
-----------------------	-----	-----	-----	-----	-----	-----	-----

3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքներին հակազդելու և դրանք մեղմելու նպատակով 2020-2021 թվականներին կառավարությունը, շեղվելով հարկաբյուջետային կանոններից և կիրառելով օրենսդրությամբ սահմանված «բացառիկ դեպքերի» կարգավորումները, իրականացրել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն: Արդյունքում արձանագրվել է պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի էական աճ: 2021 թվականին բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ նվազել է, սակայն մնացել է պատմականից բարձր մակարդակում, իսկ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 60.3%:

ՄԺԾԾ-ում նշվում է, որ առաջիկա երեք տարիներին իրականացվելիք հարկաբյուջետային քաղաքականությունը, միտված լինելով 7% տնտեսական աճի ապահովմանը, պետք է շեշտադրի պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև պարտքի կայունության պահպանմանը: Նկատի ունենալով վերջին տարիներին ներդրումների աճի դինամիկան (Աղյուսակ 2)՝ առնվազն զարմանալի է այն ակնկալվող լավատեսությունը, որ 2018-2021 թվականներին ընդամենը 14.6% կուտակային աճ գրանցած «հիմնական միջոցներում ներդրումներ» ցուցանիշը 2022-2025 թվականների ընթացքում (կրկին չորս տարի) աճելու է ևս 84.9 տոկոսային կետով և դրանով պետք է նպաստի տնտեսական աճի ապահովմանը: Մասնավորապես, այդ ցուցանիշն ապահովվելու համար 2022-2025թթ. հիմնական միջոցներում ներդրումները պետք է տարեկան աճեն միջին հաշվով շուրջ 15%-ով, այն դեպքում, երբ 2018-2021թթ. աճել են միջին հաշվով ընդամենը 3.5%-ով (2020թ. անկումը հաշվի չառնելու պարագայում միջին աճը կազմում է 5.2%): Նույն մտահոգությունը տեղին է և՛ պետական, և՛ մասնավոր ներդրումների համար:

Աղյուսակ 2. Ներդրումների աճի դինամիկան, %⁶

Ցուցանիշներ	2018 փաստ.	2019 փաստ.	2020 փաստ.	2021 փաստ.	2022 սպաս.	2023 կանխ.	2024 կանխ.	2025 կանխ.
<i>Տարեկան աճը</i>								
Հիմնական միջոցներում ներդրումներ	4.8	4.4	-1.5	6.3	16.0	22.2	10.3	11.4
Պետական	3.4	13.7	6.1	18.4	22.2	51.7	11.1	14.9
Մասնավոր	5.1	2.6	-3.1	3.5	14.3	13.8	10.0	10.0
<i>Կուտակային աճը (2017թ. նկատմամբ)</i>								
Հիմնական միջոցներում ներդրումներ	4.8	9.4	7.8	14.6	32.9	62.4	79.1	99.5
Պետական	3.4	17.6	24.7	47.7	80.5	173.8	204.2	249.5
Մասնավոր	5.1	7.8	4.5	8.1	23.6	40.7	54.7	70.2

• **Բյուջեի եկամուտներ:** Նախատեսվում է, որ պետական բյուջեի եկամուտները, առաջիկա երեք տարիներին աճելով միջին հաշվով տարեկան 12.2%-ով, 2025 թվականին կհասնեն ՀՆԱ-ի նկատմամբ 25.4%-ի:


Հարկ է նշել, որ 2022 թվականի առաջին չորս ամիսներին պետական բյուջեի եկամուտները ծախսերի համեմատ աճել են առաջանցիկ տեմպով, ինչի արդյունքում ձևավորվել է 55.7 մլրդ դրամ հավելուրդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 52.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Սա, իհարկե, դրական գործոն է սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիայի տրամաբանությամբ հաջորդ տարիներին պարտքի հետագիծը նվազեցնելու ուղղությամբ հիմքեր ստեղծելու համար, սակայն հարկավոր է զգոն լինել՝ դրանով տնտեսական ակտիվության վրա չափից ավելի զսպող ազդեցություն թույլ չտալու առումով:

ՀՀ կառավարությունն իր 2021-2026թթ. գործունեության ծրագրով նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում «հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով» ապահովել հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ՝ 2026 թվականին հասցնելով առնվազն 25%-ի: ՄԺԾԾ-ով ակնկալվում է, որ արդեն 2022-ին այն կկազմի 23.5%, իսկ առաջիկա երեք տարիներին նախատեսվում է, որ ցուցանիշի տարեկան միջինը աճելու է 0.4 տոկոսային կետով՝ 2025 թվականին հասնելով 24.8%-ի: Իրականում, ինչպես արդեն նշվել էր «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ

⁶ Աղբյուրը՝ 2021-2023 և 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրեր և հեղինակի հաշվարկներ:

վերլուծությունում»⁷, վերջին տարիների զարգացումները վկայում են, որ 2019 թվականին արձանագրված էական աճի հետ համեմատաժամանակ ստվերային հատվածի կրճատման (հարկային վարչարարության բարելավման) տեմպը 2021թ. զգալիորեն դանդաղել է: Թերևս դա է վկայում այն փաստը, որ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին 2018 թվականի 20.9%-ից աճել է մինչև 22.4%, իսկ հետագա երկու տարիներին ընդհանուր առմամբ աճել է ընդամենը 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում⁸



• **Բյուջեի ծախսեր:** Նախատեսվում է, որ պետական բյուջեի ծախսերը, առաջիկա երեք տարիներին աճելով միջին հաշվով տարեկան 12.7%-ով, 2025 թվականին կհասնեն ՀՆԱ-ի նկատմամբ 27.9%-ի:


Նախատեսվում է, որ ծախսերի կառուցվածքում կնվազի ընթացիկ և կաճի կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը: Մասնավորապես, նախատեսվում է, որ 2025 թվականին ընթացիկ ծախսերը կկազմեն ծախսերի ընդհանուր ծավալի 77.4%-ը (2022թ. այդ ցուցանիշը ծրագրվել է 84.3%):

Գծապատկեր 3-ում ներկայացված է ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ տարբեր փաստաթղթերում կատարված կանխատեսումների համեմատականը:

⁷ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ վերլուծություն, <https://www.luys.am/img/artpic/small/129a6e5bc02fedfeee68Statebudget2021.pdf> (այցելվել է 13.07.2022թ.):


⁸ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հրապարակումներ:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում⁹



Գծապատկեր 4-ում պատկերված է Պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան: Համաձայն ՄԺԾԾ-ի՝ ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը, 2021թ. 25.6%-ից շարունակաբար նվազելով, 2025թ. կհասնի 21.6%-ի, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշն ընդհակառակը՝ 2021թ. 3.1%-ից շարունակաբար աճելով, 2025թ. կհասնի 6.3%-ի: Արդեն 2023 թվականին նախատեսվում է էականորեն ավելացնել կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ հասցնելով 5.7%-ի և նվազեցնել ընթացիկ ծախսերինը՝ հասցնելով 22.4%-ի:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան, % ՀՆԱ-ում¹⁰



Գծապատկերից երևում է, որ 2018-2021 թվականների ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը միջին հաշվով կազմել է 3.1% (2017 թվականի ցուցանիշից 1.2 տոկոսային կետով ցածր): Հարկ է նաև նշել, որ հիշյալ ժամանակաշրջանում բոլոր տարիներին կապիտալ ծախսերը


⁹ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հրապարակումներ:

¹⁰ Աղբյուրը՝ «2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիր»:

թերակատարվել են¹¹ համապատասխանաբար 22.0, 26.5, 15.1 և 7.5 տոկոսով կամ տարեկան միջին հաշվով 17.8 տոկոսով: Հաշվի առնելով նշված պատմական միտումները՝ մինչև 2025 թվականը կապիտալ ծախսերը՝ ՀՆԱ-ի 6.3%-ին հասցնելու խնդիրը ևս դժվար իրագործելի է թվում:

• **Պետական բյուջեի պակասուրդ:** Ակնկալվում է, որ ծրագրվող բոլոր երեք տարիներին պետական բյուջեի պակասուրդի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 2.5-ից 3.2% միջակայքում: Ինչպես նախկին ծրագրերում, ՀՀ 2023-2025թթ. ՄԺԾԾ-ում ևս պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

Գծապատկեր 5. Պետական բյուջեի պակասուրդի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում¹²



• **Հարկաբյուջետային կանոններ:** Ինչպես արդեն նշվել է, ծրագրով հայտարարվում է, որ միջնաժամկետում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի առնվազն 7.0% տնտեսական աճի ապահովմանը: Այդ նպատակով, հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնված է լինելու հետևյալ սկզբունքների վրա.

- o Հարկաբյուջետային կայունության պահպանում: 2022թ. արդյունքներով ակնկալվում է վաղաժամ ապահովել ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով նախատեսված 60%-ից ցածր պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախը, իսկ 2025 և 2026 թվականներին այն հասցնել համապատասխանաբար 55.0%-ի և 53.5%-ի:
- o Տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականության իրականացում: Նախատեսվում է, որ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա

¹¹ Աղբյուրը՝ «Լոյս» հիմնադրամի 2018-2021 թվականների պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամենամյա վերլուծություններ:

¹² Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հրապարակումներ:

2023-ին կլինի խթանող՝ հիմնականում կապիտալ ծախսերի աճի հաշվին, իսկ միջնաժամկետում կկայունանա չեզոք դիրքում:

ՄԺԾԾ-ով ակնկալվում է, որ միջնաժամկետում, բարձր տնտեսական աճի ապահովման և պարտքային կայուն միջավայրի պահպանման անհրաժեշտությունից ելնելով, կիրականացվի չափավոր խթանող, այնուհետև չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն: Միջնաժամկետ հորիզոնում թիրախավորվել է կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի աստիճանական նվազում՝ 2025 թվականին հասցնելով այն 55.0%-ի: 2023-2025 թվականներին, կառավարության պարտքի թիրախին հասնելու նպատակով նախատեսվում է իրականացնել սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նվազեցնելով պետական բյուջեի պակասուրդը և մինչև 2025 թվականը հասցնելով այն ՀՆԱ-ի նկատմամբ 2.5%-ին:

4. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2022-2026ԹԹ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Համաձայն ՀՀ հարկաբյուջետային կանոնների պահանջի՝ կառավարության պարտքի՝ ՀՆԱ-ի 60%-ը գերազանցելու դեպքում կառավարությունն Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանն է ներկայացնում միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծն առաջիկա 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:

Կառավարության որոշմամբ (2022թ. հունիսի 30-ի նիստ) հաստատվեց «ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ. ծրագրի» վերանայված տարբերակը: Բուն ծրագիրը մշակվել և ներկայացվել էր 2022-2024թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ միասին:

Համաձայն ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ. ծրագրի՝ ՀՀ կառավարության պարտքը պետք է նվազեցվի ՀՆԱ 60% մակարդակից ներքև՝ 5 տարիների ընթացքում, որով պայմանավորված՝ ծրագրի վերանայված տարբերակում կանխատեսումները ներկայացված են 4 տարվա հորիզոնով:

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը գերազանցել էր 60%-ի շեմը 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի շուկերի պայմաններում բյուջեի պակասուրդի ընդլայնման, արձանագրված տնտեսական անկման և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով: Արդյունքում, 2020 թվականին ցուցանիշն ավելացել էր 13.4 տոկոսային կետով և

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 63.5%: Այնուհետև 2021 թվականին, հիմնականում պայմանավորված ՀՀ դրամի արժևորմամբ և տնտեսական վերականգմամբ, պարտքի բեռը որոշակի չափով նվազել է՝ կազմելով 60.3%:

Թե՛ ՄԺԾԾ-ում և թե՛ «ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. վերանայված ծրագրում» կառավարությունը չի ժխտում, որ 2021 թվականին կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազման գործում զգալի է եղել դրամի արժևորման «նպաստումը» (դոլարի նկատմամբ դրամը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա նույն օրվա համեմատ արժևորվել է ավելի քան 8.8%-ով):

Ծրագրի վերանայված տարբերակում նախատեսվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովմանն ուղղված ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Նախատեսվում է աստիճանաբար բարելավել պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը՝ հարկային եկամուտների միջոցով: Իսկ ծախսային մասում նախատեսվում է ՀՆԱ-ի մեջ աստիճանաբար ավելացնել երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող կապիտալ ծախսերը և միաժամանակ նվազեցնել ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը:


Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է վերը, հաշվի առնելով վերջին տարիներին այս ցուցանիշների առումով բավական անբարենպաստ զարգացումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՄԺԾԾ-ում ընդհանուր առմամբ բացակայում են այն կոնկրետ միջոցառումները, որոնց իրականացման արդյունքում կապահովվի պլանավորված ցուցանիշների մակարդակը, հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովմանն ուղղված ցուցանիշների կանխատեսումները խիստ ռիսկային են թվում:

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ կանխատեսումները, % ՀՆԱ-ում¹³

ՀՆԱ-ի նկատմամբ %	2022	2023	2024	2025	2026
Պետական բյուջեի եկամուտներ	25.0	24.9	25.1	25.4	25.7
Պետական բյուջեի ծախսեր	27.2	28.1	27.8	27.9	28.3
Ընթացիկ ծախսեր	22.8	22.4	22.0	21.6	21.2
Կապիտալ ծախսեր	4.3	5.7	5.8	6.3	7.1
Պետական բյուջեի պակասուրդ	-2.1	-3.2	-2.7	-2.5	-2.5
Կառավարության պարտք	58.4	57.9	56.0	55.0	53.5

Գծապատկեր 6-ում ներկայացված է Կառավարության պարտքի նվազեցման սկզբնական և վերանայված ծրագրերով կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի կանխատեսվող դինամիկայի համեմատությունը:

Գծապատկեր 6. Կառավարության պարտքը, % ՀՆԱ-ում¹⁴



ՀՀ կառավարությունը 2022 թվականին ակնկալում է վաղաժամ ապահովել կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով նախատեսված 60%-ից ցածր պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախը՝ 2025 և 2026 թվականներին այն հասցնելով համապատասխանաբար 55.0%-ի և 53.5%-ի:

¹³ Աղբյուրը՝ «ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. վերանայված ծրագիր»:

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հրապարակումներ:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրում ևս շարունակվում է ընդգծվել կառավարության չհիմնավորված լավատեսությունը: Ծրագրի հետ կապված առկա են մի շարք մտահոգություններ: Այսպես.

1. 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հիմնված է ոչ թե մակրոտնտեսական կանխատեսումների, այլ թիրախների վրա, ինչը բավական ռիսկային է: Մասնավորապես, ՄԺԾԾ-ի հիմքում դրված է կայուն 7% տնտեսական աճի սցենար, որն էականորեն բարձր է բոլոր անկախ կառույցների կանխատեսումներից: Նման բարձր աճի թիրախավորումը պայմանավորված է կառավարության գործող ծրագրին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Սակայն հաշվի առնելով, որ այդ սցենարի հետևանքով նախատեսվում են իրական հնարավորություններից ավելի բարձր հարկեր և ծախսեր, ապա ակնհայտ է, որ թիրախների չապահովման պարագայում ավել նախատեսված այդ ծախսերը կֆինանսավորվեն պարտքով՝ էապես մեծացնելով հարկաբյուջետային կայունության ռիսկերը:

2. Միջազգային ֆինանսական կազմակերպությունները «չեն կիսում» ՀՀ կառավարության լավատեսությունը: ԱՄՀ կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները 2022թ. համար բավական պահպանողական են: Այսպես, ռուս-ուկրաինական հակամարտությունով պայմանավորված վերանայումից հետո, ՀՀ համար կանխատեսվում է 1.5% տնտեսական աճ, իսկ 2023-2025 թվականներին՝ 4-4.5%: Լավատեսական չի կարելի համարել նաև ՀԲ կանխատեսման հունիսյան վերանայումը, որով Հայաստանի՝ 2022 թվականի համար ապրիլ ամսին կանխատեսված (Ուկրաինայում ռազմական գործողությունների հավանական ազդեցությունը հաշվի առնելով) 1.2% տնտեսական աճի տեմպը բարձրացվեց մինչև 3.5%-ի, սակայն այն, միևնույն է, կրկնակի ցածր է մնում կառավարության նախանշած թիրախային 7%-ից:

3. Ներդրումների վերաբերյալ կանխատեսումները բավարար հիմնավորված չեն: ՄԺԾԾ-ում նշվում է, որ առաջիկա երեք տարիներին իրականացվելիք հարկաբյուջետային քաղաքականությունը, միտված լինելով 7% տնտեսական աճի ապահովմանը, ինչպես նաև պարտքի կայունության պահպանմանը, պետք է շեշտադրի պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը: Հաշվի առնելով վերջին տարիներին ներդրումների աճի դինամիկան՝ տարակուսանքի տեղիք է տալիս այն լավատեսությունը, որ այդ ցուցանիշն ապահովելու համար 2022-2025թթ. հիմնական միջոցներում ներդրումները պետք է տարեկան աճեն միջին հաշվով շուրջ 15%-ով, այն դեպքում,

երբ 2018-2021թթ. դրանք աճել են միջին հաշվով ընդամենը 3.5%-ով (2020թ. անկումը հաշվի չառնելու պարագայում միջին աճը կազմում է 5.2%): Նույն մտահոգությունը տեղին է և՛ պետական, և՛ մասնավոր ներդրումների համար:

4. Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման կանխատեսումը ՄԺԾԾ-ում բավական հավակնոտ է և ռիսկային՝ հաշվի առնելով նշված ցուցանիշի բարելավման պատմական միտումները: Կառավարությունը նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում «հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով» ապահովել հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ: Իրականում, վերջին տարիների զարգացումները վկայում են, որ համեմատած 2019թ. արձանագրված էական աճի հետ՝ ստվերային հատվածի կրճատման (հարկային վարչարարության բարելավման) տեմպը զգալիորեն դանդաղել է: Թերևս դա է վկայում նաև այն փաստը, որ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին 2018-ի 20.9%-ից աճել է մինչև 22.4%, իսկ հետագա երկու տարիներին ընդհանուր առմամբ աճել է ընդամենը 0.3 տոկոսային կետով: Այս իմաստով, վերոհիշյալ թիրախային ցուցանիշի (2025 թվականին ՀՆԱ-ի 24.8%-ը) ապահովումը բավական հավակնոտ է: Անիրատեսական հարկային եկամուտների կանխատեսումը չափազանց վտանգավոր է, քանի որ դրանց հիման վրա կարող են նախատեսվել ծախսային պարտավորություններ, որոնք հարկային եկամուտների՝ սպասվածից ցածր լինելու պարագայում կվտանգեն հարկաբյուջետային կայունությունը:

5. Դժվար իրազդեցիկ կլինի նաև բյուջեի կապիտալ ծախսերի բավական բարձր աճի ապահովումը: ՄԺԾԾ-ով նախատեսվում է, որ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականի 3.1%-ից մինչև 2025 թվականը կաճի 3.2 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%: Ընդ որում, ակնկալվում է, որ արդեն 2023 թվականին այդ ցուցանիշը կհասնի 5.7%-ի: 2018-2021 թվականների ընթացքում վերոհիշյալ ցուցանիշը միջին հաշվով կազմել է 3.1% (2017 թվականի ցուցանիշից 1.2 տոկոսային կետով ցածր): Ավելին, հիշյալ ժամանակաշրջանում բոլոր տարիներին կապիտալ ծախսերը թերակատարվել են (տարեկան միջին հաշվով 17.8 տոկոսով): Նկատի ունենալով վերոգրյալը՝ մինչև 2025 թվականը կապիտալ ծախսերը ՀՆԱ-ի 6.3%-ին հասցնելու խնդիրը ևս դժվար իրազդեցիկ է թվում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: